# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

# ՀՐԱՄԱՆ № 66-Ն

«10» 09 2025թ. ք. Երևան

## ՀԱՆՁՆՈՒՄ-ԸՆԴՈՒՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արման Աշոտի Ապրեսյանին Կապանի կայազորի զինվորական դատախազի պաշտոնին փոխադրելու և Վիգեն Ռուբենի Հարությունյանին Լոռու կայազորի զինվորական դատախազի պաշտոնին փոխադրելու մասին ՀՀ գլխավոր դատախազի 02.09.2025թ. N 370-Ա և 04.09.2025թ. N 378-Ա հրամանները և այն, որ անհրաժեշտ է նրանց միջև կատարել վարույթների, փաստաթղթերի և գույքի հանձնում-ընդունում, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով և 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝

**Հ ր ա մ ա յ ո ւ մ  ե մ՝**

1. Կատարել Ա. Ապրեսյանի կողմից՝ Լոռու կայազորի զինվորական դատախազության վարույթների, փաստաթղթերի և գույքի հանձնում, իսկ Վ. Հարությունյանի կողմից՝ ընդունում, որի համար ստեղծել հանձնախումբ՝ հետևյալ կազմով.

***Հանձնախմբի ղեկավար՝***

Էլիզբարյան Գրիգոր - Հայաստանի Հանրապետության զինվորական դատախազ, գլխավոր դատախազի տեղակալ

***Հանձնախմբի անդամներ՝***

Վերմիշյան Էդուարդ - Լոռու կայազորի զինվորական դատախազության ավագ դատախազ

Առաքելյան Ռուբեն - Հայաստանի Հանրապետության դատախազության ֆինանսատնտեսական վարչության պետ

Նազարեթյան Արմինե - Հայաստանի Հանրապետության դատախազության արխիվի բաժնի պետ

| | |
|---|---|
| Ղահրամանյան Մարուշ - | Հայաստանի Հանրապետության դատախազության ընդհանուր բաժնի պետի պաշտոնակատար |
| Մանուկյան Լիաննա - | Հայաստանի Հանրապետության դատախազության առաջին բաժնի պետ |
| Ավետիսյան Տաթևիկ - | Լոռու կայազորի զինվորական դատախազության տարածքային բաժնի պետ: |

2. Հանձնախմբի ղեկավարին՝ հանձնման-ընդունման ակտի մեկ օրինակը Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչություն ներկայացնել մինչև 2025 թվականի սեպտեմբերի 30-ը:

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ,
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ
ԴԱՍԻ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ Ա.ԱՐԱՄՅԱՆ